07300797
Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ
Անտառաշենի գյուղապետարան
№ 1
29 հունվարի 2014թ

Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Նալբանդյանին

Ձեզ ներկայացնում եմ Լոռու մարզի Անտառաշենի համայնքի ավագանու թիվ 1-Ն և համայնքի ղեկավարի թիվ 1-Ն, Ա որոշումները:

Կից՝ 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ /Հ. Առաքելյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 23 » հունվարի 2014 թ.

# Ո Ր Ո Շ Ու Մ N 1- Ն

## ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 թ-ի ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, ղեկավարվելով "Բյուջետային Համակարգի" մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով Լոռու մարզի Անտառաշեն համայնքի Ավագանին Որոշում է հաստատել Անտառաշեն համայնքի 2014 թ-ի փոփոխված բյուջեն;

Ավագանու անդամներ ՝ կողմ ձեռնպահ դեմ

Խառատյան Ռաֆիկ

Սիմոնյան Արամայիս

Խառատյան Ռոստոմ

Ղունաշյան Արմեն

Համայնքի ղեկավար ՝ Վ.Ասլանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 23 » հունվարի 2014 թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 1- Ն

## ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014թ. ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ''ՀՀ բյուջետային համակարգի մասին'' օրենքի 33 հոդվածի և առաջնորդնելով Անտառաշեն համայնքի 2014 թ-ի բյուջեն հաստատելու մասին Ավագանու 23.01.2014 թ-ի «Լոռու մարզի Անտառաշեն համայնքի 2014թ-ի փոփոխված բյուջեն հաստատելու մասին» թիվ 1-Ն Որոշմամբ.

1. Հաստատել համայնքի 2014 թ-ի փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:
2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2014թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Համայնքի ղեկավար՝ Վ.Ասլանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2014 թվականի N 2

06-026-0101-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով քաղաքացի Հ. Ասլանյանի դիմումը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387–Ն որոշմամբ,*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վերականգնել 06-026-0101-0007 ծածկագրի տակ գտնվող 0.08925 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1961թ. կառուցված 86.1քմ մակերեսով բ/պ 10.58 բնակելի տան նկատմամբ Հարություն Լենդրուշի Ասլանյանի (ծնված 1983թ.) սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Անտառաշեն համայնք, 1 փողոց, 2-րդ փկղ, տուն 4:
5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի կողմից նախկինում տրամադրված բոլոր որոշումները և գրությունները, փաստաթղթերը:

***Համայնքի ղեկավար՝ Վ. Ասլանյան***